«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործում

Հաստատություն՝ Երևանի թիվ 150 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Նաիրա Բաղդասարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները……4

Գլուխ 2. Ազգային տոներն ու ծեսերն նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում……8

Եզրակացություն……14

Գրականության ցանկ……15

Ներածություն

<<Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>> թեման ընտրելիս հաշվի եմ առել, որ այժմ առավել քան երբևէ սա դարի հրամայականն է, հայի ինքնության պահպանման, հայ մնալու համար և սերունդների դաստիարակության գործում: Այս դարաշրջանի փոփոխությունները իր հետ բերում են բազմաթիվ մարտահրավերներ՝ տանը, մանկապարտեզում, բակում երեխաների դաստիարակության և կրթության բնագավառում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ազգային տոների և ծեսերի, կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Յուրաքանչյուր մասնագետ, ով մուտք է գործում կրթական հաստատություն ունի իր առաքելությունը, դաստիարակել ու կրթել հայրենիքին արժանի, ավանդական, բարոյակայն և ազգային արժեքները բարձր պահող մարդ:

Հայաստանում ազգային արժեքների ձևավորումը երեխաների մեջ ներառված է Հայաստանի Հանրապետության Նախադպրոցական Կրթական պետական չափորոշչով: Նրա հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների վրա հիմնված մոտեցումն է:

Ազգային տոների պահպանումը և ազգային արժեքները նախադպրոցական տարիքի երեխաների կրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական առանձնահատկություններ: Ազգայի տոների գլխավոր նպատակն է, որ ազգային մշակույթի արժեքները չմոռացվեն: Երեխան հանդիսանում է ծեսը փոխանցողը և պահպանողը դեպի տուն և շրջակա միջավայր: Նախադպրոցական տարիքի երեխան ազգային մշակույթում կիրառում է իր գիտելիքները,հմտությունները,կարողությունները, զարգանում է երևակայությունը և կարողանում է ազատ արտահայտել իր մտքերը:Ազգային տոնը երեխայի համար մի այնպիսի միջավայր է, որտեղ նա կարող է ազատ խաղալ, ունենալ դերային խաղ,որը նրան կտա ազատ դրսևորվելու հնարավորություն:

Գլուխ 1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները

Աշխարհը փոխվում է, փոխվում են նաև աշխարհի երեխաները, և այսօրվա երեխաները նույնը չեն, ինչ մեր ժամանակների երեխաները։ Շրջապատող աշխարհն իր բազմազանությամբ այնպես է ազդում երեխայի վրա, որ նշանակալիորեն գերազանցում է անհասկանալի երևույթները բացատրելու նրա ընդունակությունը։ Ճանաչողական զարգացման և աշխարհընկալման կարևորագույն պայմանը երեխայի համար, դա ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտն է։ Նախադպրոցական տարիքի երեխաներից շատերը նեղացկետ են ,զգում են մեծերի կողմից դրսևորվող հարգանքի, գովասանքի վերաբերմունք և ազդվում են դիտողություններից՝ ընդունելով դրանք, որպես վիրավորանք։ Երեխան համագործակցում է ծնողի, դաստիարակի հետ այն ժամանակ, երբ զգում է, որ նրանք լսում են իրեն ուշադրությամբ և չեն ծիծաղում կամ ծաղրում իր ասածների վրա։

Նախադպրոցական տարիքի երեխաները շարունակում են լայնորեն ուսումնասիրել ֆիզիկական և սոցիալական աշխարհը զարգացնելով նախասիրությունները տարբեր մարդկանց, գործողությունների և իրավիճակներից ելնելով։ Կանոնները անհրաժեշտ են երեխաների կրթության դաստիարակության և նրանց առողջ ու ապահով զարգացման համար։ Ծնողների և մանկավարժների մեծամասնությունը ձգտում է, որպեսզի իրենց երեխաները դառնան արժանապատիվ, կարգապահ և պատասխանատու անհատներ։ Այսօր մեծահասակները սկսում են հասկանալ և տեղյակ են դրական դաստիարակչական մոտեցումներին։

Այս դարի մարտահրավերները ունեն և ՛ դրական , և ՛ բացասական կողմեր։ Մենք մանկավարժներս պետք է գիտակցենք և ամեն ինչի մեջ գտնենք ոսկե միջինը, որ երեխայի համար լինի հաճելի, հետաքրքիր, հասկանալի, ցանկալի և ուսուցանող։ Եթե երեխային չհետաքրքրեց նյութը, ապա մեր ջանքերը իզուր են։ Ցանկալի է գտնենք այն բանալին, հիմքը, որի վրա պիտի կառուցենք այն ինչը ցանկանում ենք,

որ երեխան սովորի։ Այս ամենի մեջ մեծ տեղ պետք է հատկացնել խաղին, որը երեխայի նախադպրոցական տարիքի հոգեկան զարգացման գործում մեծ տեղ է զբաղեցնում։

Յուրաքանչյուր դաստիարակ, օրվա խաղային հատվածին պետք է մեծ նշանակություն տա, քանի որ խաղը հանդիսանում է ուսումնական ծրագրի կարևոր և բաղկացուցիչ մաս։ Խաղի ժամանակ նախադպրոցական տարիքի երեխաները դառնում են միասնական, համախմբվում են մի նպատակի շուրջ,իսկ պասիվ երեխաները ակտիվանում են, նկատվում է նրանց թաքնված կարողունակությունները, զարգանում է ստեղծագործական կարողությունները, սոցիալական հմտությունները (հաղորդակցում, բանակցում, իրավիճակից ելնելով կարողանում է ինքնուրույն լուծում գտնել) և համգործակցում է հասակակիցների հետ։

«Պայծառ գլուխը և հմուտ ձեռքերն ավելին են, քան անպետք գիտելիքներով ծանրաբեռնված միտքը։ Անհրաժեշտ է վերացնել հնարավոր բոլոր վտանգները և նախապատրաստել նյութ, որը երեխան հաջողությամբ օգտագործելով՝ ստանա ոչ թե սխոլաստիկ, այլ կենդանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ»։

Ս. Ֆրենե

Ըստ Ս.Ֆրենեի երեխայի զարգացումն է պայմնավորում ուսուցումը և ինքնակազմակեպվող գործունեության ընթացքում երեխան սովորում է գիտակցաբար մոտենալ իր գործողություններին։

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը։ Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի հաղորդակցումն է արտաքին միջավայրի հետ։ Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը։ Գեղագիտական դաստիարակության կարևորագույն պայմաններից է բնության հետ երեխայի տևականորեն շփման ապահովումը։

Նախադպրոցական տարիքի երեխայի գեղագիտական զարգացմանը առավել նպաստում է ինքնուրույն գեղարվեստական գործունեությունը, այդ կարողությունը զարգանում է հաջորդաբար անցնելով ձևավորման 3 մակարդակ.

- վերարտադրող գործունեության ձևավորում
- ստեղծագործական բնույթի,մեծահասկանեի հետ համատեղ գործունեության ձևավորում
- ինքնուրույն գեղարվեստական գործունեուրյան ձևավորում որը աստիճանաբար վերածվում է ստեղծագործության։

Գեղաագիտական դաստիարակության կազմակերպման ձևերը բազմաթիվ են ու բազմաբնույթ։ Նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվող մանկավարժական գործընթացում ծրագրավորված կազմակերպվում են բազմատեսակ տոնահանդեսներ ծեսեր, ցերեկույթներ և այն։

4-6 տարեկան երեխաների իմացական ոլորտի զարգացման գործում շատ մեծ դեր ունեն ազգային, ժողովրդական տոնակատարությունները։ Տոնակատարությունները հարկավոր է կառուցել երեխաների հուզական ոլորտի մակարդակի վրա։ Նախադպրոցական տարիքի երեխաների կրթադաստիարակչական ծրագիրը նախատեսում է դաստիարակել մարդասիրական վերաբերմունք, զարգացնել բարոյական պատկերացումներ ազնվության,կարեկցանքի նկատմամբ ։ Երեխայի դաստիարակության հիմնական ուղին երեխայի շարժումն է դեպի ընդհանուր մարդասիրական արժեքներ, որոնք բացահայտվում են ազգայի մշակույթի՝ պարերի , երգերի , առածների, ասացվածքների հետ երեխայի հաղորդակցման միջոցով։ Նախադպրոցական ուսումնական հաստատությունում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, ազգայի տոնին նվիրված ցերեկույթ , զվարճություն իր ուրույն հետքն է թողում երեխայի հիշողության և երևակայության վրա, նպաստում անձի, հայ մարդու ձևավորմանը։ Յուրաքանչյուր տոն պետք է ունենա իր առանձնահատուկ երանգն ու գրավչությունը ։

Արվեստի տարբեր ճյուղերի համատեղումը ազգայի տոների և զվարճանքների ժամանակ ներգործուն ազդեցություն է ունենում երեխաների զգայական աշխարհի և գիտակցության վրա։ Ազգայի տոների նախապատրաստումն ու ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում են նախադպրոցականի դաստիարակության գործին։ Երեխաներն ավելի են համախմբվում, ապրում են ընդհանուր հետաքրքրություններով, նրանց մեջ մշակվում է վարվելակերպի կուլտուրա և կարգապահություն։ Մեծ է նաև ժողովրդական ստեղծագործությունների, խաղիկների դերը ազգային զգացմունքների ձևավորմքան և զարգացման գործում։ Սաների սովորած երգերի, պարերի շնորհիվ ձևավորվում է նրանց գեղագիտական ճաշակը, ընդլայնվում է մտահորիզոնը, զարգանում է հիշողությունը, երևակայությունը, նպաստում է մտավոր զարգացմանը։

Գլուխ 2.Ազգային տոներն ու ծեսերն նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում

Յուրաքանչյուր տոն տվյալ ժողովրդի կենսագրությունն է, պատմության մի մասնիկը, խառնվածքի և բնավորության ինքնուրույն դրսևորումը: Դեռևս վաղ ժամանակներից տոները եղել են բանավոր ամենամեծ ստեղծագործությունները, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ, դարերից դար: Հայկական տոները հաջորդում են իրար որոշ կարգով և կապ ունեն բնության և տարվա եղանակների հետ: Հայ ազգային ծեսը մշակույթի այն մասն է , որը առավել արդյունավետ է ,ազգային արժեքների պահպանման գործում: Մարդիկ հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, հագուստի՝ տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Այսօրվա ժամանակակից աշխարհը մարդկանց հեռու են պահել ծիսական առօրյայից և հաճախ շատ ծեսեր մոռացության են մատնվում և չեն գործածվում: Տոնը, ծեսը մարդու կյանի ամենակարևոր բաղադրիչ մասն է կազմում: Հայկական ավանդույթը մշակութաբանական երևույթ է, ազգ և անհատականության ինքնաճանաչման գործոն, մեր ինքնության աղբյուր: Ավանդույթը իրենից ենթադրում է դինամիկ զարգացում, այդ պատճառով յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է տոնական արարողակարգում և դրանից խուսափելով կարող ենք հանգել ավանդույթի վերացմանը: Տոների և ծեսերի ընտրության հարցում նախադպրոցական ուսումնական հաստատությունը համաձայն կրթական ծրագրիր՝ նախադպրոցական ուսումնական այլ մասնագետների հետ պլանավորում և իրականացնում են կրթադաստիարակչական աշխատանքներ: Ամեն գործոն պետք է ներդրվի, որ մանկավարժները դեռ վաղ տարիքից երեխաների մեջ սերմանեն մեր հայկական ավանդույթները, որպեսզի մնանք ազգայինին հավատարիմ:

Մանկապարտեզում մանրազնին նախապատրաստվում են տոնին, հաշվի են առնվում յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ծիսական , տոնական գործունեությունը, որոշակի փուլեր է ենթադրում՝

- Ծեսի նախախատրաստում
- Ծիսակատարություն

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության բաղկացուցիչ մաս դարձնելը ունի մի շարք կարևոր և դրական առանձնահատկություններ.

- երեխան ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային, ազգային հագուստներին
- սովորում է ժողովրդական երգերը,պարերը,խաղերը,ասիկներ
- երեխան երգի և խաղիկների միջոցով հաղթահարում և սովորում է բարբառային բառերը
- մասնակցում է ծիսական միջավայրի ստեղծմանը
- արդյունքում վերականգնվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով
- տոնի մեջ ներգրավվում են ծնողներին և համագործակցում են նրանց հետ, որոնք տեղյակ են տվյալ տոնի մասին

Նախադպրոցական կրթական հաստատությունում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային տոնին նվիրված ցերեկույթ, զվարճություն խորը հետք են թողնում երեխայի կյանքի, հիշողության, երևակայության վրա։ Միջոցառման նախապատրաստական աշխատանքները, երեխային տրվող հանձնարարությունները, ծնողների ներգրավվածությունը և հյուրերի առկայությունը անցկացվող միջոցառմանը, երեխաների մեջ սերմանում են պատասխանատվություն, պարտաչանաչություն և ջանասիրություն։ Հետևաբար դաստիրակները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն և հաշվի առնեն տեղական պայմանները, միջավայրը, եղանակը (դրսում անցկացնելու համար), եղած հնարավորությունները։ Նպատակահարմար է միջոցառմանը հրավիրել ճանաչված մարդկանց, արվեստագետնեիրի, ազգային ծեսերին գիտակ մասնագետների, Հայ Առաքելական եկեղեցու քահանաների,

պատասխանատուների։Այդպիսի հանդիպումները երեխաների համար լինում են անմոռաց, տպավորիչ և մեծապես նպաստում են երեխայի անձի ձևավորմանը։

Յուրաքանչյուր միջոցառում,ազգային տոն պետք է ունենա իր առանձնահատուկ երանգն ու գրավչությունը, դեմքն ու նկարագիրը, լինի ոչ միայն այդ խմբի դաստիարակի, այլև ամբողջ մանկապարտեզի աշխատակազմի տոնահանդեսը։ Բոլորը այդ օրը լինեն սրտացավ ու պատրաստակամ։ Ծիսական միջոցառումները (Սուրբ Ծնունդ, Բարեկենդան, Ծաղկազարդ, Սուրբ Զատիկ, Համբարձում, Վարդավառ, Բերքի տոն) նախադպրոցական ուսումնական հաստատությունում վերածվում է մի շքեղ հանդիսության։ Այդ տոները իսկական հայեցի դաստիարակության և հայի ինքնության պահպանման հրաշալի օրինակներ են։ Շատ կարևոր է, որ տոնակատարության կազմակերպիչները պահպանեն հայ ազգայի ծիսակարգը և երեխաների համար ընկալելի դարձնեն միջոցառման բուն բովանդակությունը և պահպանեն ծեսի խորհուրդը։ Այս տոնակատարությունների մեջ ամփոփվում են հայկական ազգային գեղեցիկ սովորույթները, կենցաղային ավանդույթները և նպաստում են ազգային ոգու սերմանմանը, երեխաների հայեցի դաստիարակությանը։ Հայկական ազգային տոներից առաջինը Նոր տարին է, որին հաջորդում է Սուրբ Ծնունդը այս երկու տոները նշում ենք մանկապարտեզում նախօրոք (դեկտեմբերի վերջին շաբաթ), քանի որ ամանորին բնականաբար բոլորս էլ հանգստի մեջ ենք լինում, իսկ հուվարին նպատակահարմար չէ նշել, քանի որ երեխաներից շատերը բացակայում են։ Փետրվարին առաջ նշում էինք Տրնդեզ կամ Տեարն ընդառաջը բայց այժմ չենք նշում,քանի ո ր նախադպրոցական տարիքի երեխայի համար այդքան էլ հասկանալի չէ այդ տոնի իմաստը։ Հիմնականում նշում ենք Բարեկենդանը, Ծաղկազարդը, Սուրբ Զատիկը՝ գարնանը, Վարդավառը՝ ամռանը և Բերքի տոնը՝ աշնանը։

Ստորև ներկայացնում եմ այն միջոցառումը, որը անցկացրել եմ «Գարնան գեղեցիկ տոներ» խորագրով։ Միջոցառման մեջ ամփոփել եմ Բարեկենդանը, Ծառզարդարը և Սուրբ Զատիկը, որը նշել եմ Ծառզարդարի հաջորդող ուրբաթ օրը։ Տոնակատարությունն իր մեջ ամփոփում էր հայկական գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ, անգամ՝ զուտ հայկական ուտեստների

պատրաստություն : Միջոցառման անցկացումը տևել է մոտ 1 ամիս: Ամեն շաբաթ իմաստավորվել է կոնկրետ գործողություններով: Տոնին մասնակցել են նաև ծնողները, հատկապես տատիկները: Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները մեր օգնությամբ ցանել են ցորեն և գարի: Կանաչ ծիլերը օգտագործել ենք սեղանը ձևավորելու և ածիկ պատրաստելու համար: Նախապատրաստական աշխատանք – զարդարված գարնանային ծառ, գունավոր ձվիկներ, թոնիր, լավաշի պատրաստման պարագաներ, չամչով փլավի բաղադրիչներ, ազգային տարազ, ակլատիզ, շրխկաններ:

Ընթացքը – Սկզբում ներկայացվում է Հ. Թումանյանի «Բարեկենդան» -ից մեկ հատված և երեխաները բացատրում են,որ հեքիաթն ու տոնը իրար են խառնվել: Ներկայացնում են Բարեկենդանի տոնը և խորհուրդը, որ նշանակում է կենդանություն, բարի կյանք: Բարեկենդանի տոնը կապ է ունեցել գարնան սկսվելու հետ և մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունի: Երեկոյան հարազատներով կուշտ ուտում էին ու խմում, քանի որ առջևում 7 շաբաթյա պասն էր: Ամենավերջում ուտում էին ձու՝ բերանը կողպելու համար, որ Զատկին դարձյալ ձվով բանան: Երեխաները միասին ասում են « Եկանք ի Բարեկենդան, կերթանք ի զատիկ», «Ձեզ բարեկենդան, մեզ՝ բարի Զատիկ» և կատարում են «Գնացեք, տեսեք» բեմականացումը:

Հետո ներկայացնում են Ծաղկազարդի տոնը, որը խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ և արմավենու ճյուղեր, զգեստներ են փռել Հիսուսի առջև ու օրհնել նրա մուտքը Երուսաղեմ: Հայ Առաքելական եկեղեցում Ծառզարդարի օրը հայտնի է նաև մանուկների օրհնության օր: Երեխաները իրենց սովորաց խաղիկներով խումբ-խումբ 2 մասի են բաժանվում, կանգնում իրար դիմաց և երկխոսում են միմյանց հետ:

- Ծառզարդա՞ր, ծառզարդա՞ր,

Ձեր տուն եկանք ծառզարդար,

Շեն մնաք,

Լիքը բարիք ունենաք,

Հատիկ տվեք էս օրվան,

Հավկիթ տվեք Զատկվան

Ծառզարդարի հաջորդ կիրակին՝ Զատիկն է: Այն իր մեջ ամփոփում է աշխարհի նորացումը, վերափոխումը,զարթոնքը և նշանակում է զատել, առանձնացնել: Երեխաները արտասանում են Զատկի տոնին նվիրված, իրենց սովորած բանաստեղծությունները և ասացվածքները: Այնուհետև ներկայացնում են Ակլատիզը և նրա պատրաստման ձևը: Հետո ներկայացնում են Զատկի տոնի պատրաստությունը, թե ինչպես են թոնիր վառում, միաժամանակ լավաշը թխում՝ երգով ու պարով, բեմադրությամբ ներկայացնում իրենց պատրաստած չամչով փլավը: Վերջում Զատկի սեղանն են զարդարում և վերջացնում հետևյալ խոսքերով.

Մեր պապերն ու մեր տատերը

Պաս են պահել, ձու են ներկել,

Օրհնել են մեծ Զատիկը սրբազան,

Պահպանել են ավանդույթը հայկական:

Եկե՛ք մենք էլ պահպանենք մեր հայկական գեղեցիկ ավանդույթները:

Ձեր Զատիկն էլ շնորհավոր լինի:

«Քրիստոս հարյավ ի մեռելոց, Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Ինչպես նաև երգում ենք «Տարվա մեջ ուրախալի», «Չամչով փլավ» երգերը և եզրափակում ենք «Յալալի» երգ-պարով:

Զատկի տոնին հատուկ նշանակություն ունեն ձվախաղերը: Միջոցառումը առանց ձվախաղերի կլիներ կիսատ: Ամենավերջում կաղմակերպվեց ձվախաղեր՝ ձուպտտոցի, ձուսեղմոցի,ձուգլդորիկ, որի մեջ ներգրավված էին նաև ծնողները:

Միջոցառումը ավարտվել է հրաշալին տրամադրությամբ, որի ժամանակ երեխաները եղել են ազատ, անկաշկանդ, ինքնավստահ:

Այս տարի նախատեսում եմ անցկացնել միջոցառում միջին նախադպրոցական տարիքի երեխաների հետ նվիրված մարդկության ամենաթանկ բարիքի՝ հացի ստեղծման պատմության վերաբերյալա, որի ընթացքում կներկայացվի լավաշի թխման արարողակարգը և թոնրատունը, որպես սրբատեղի լինելու պատմությունը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ազգային տոները և ծեսերի մասնագիտական գրականությունը, եկանք հետևյալ եզրահանգումներին

1. Հայ մշակույթի տարածման, լուսաբանման և փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ավանդական հայկական տոները և ծեսերը։ Այս ամենը իրագործելու համար անհրաժեշտ է զարգացնող միջավայր և մթնոլորտ,որը ստեղծում է դաստիարակը, հաշվի առնելով տվյալ տարիքային խմբի երեխաների անհատական,հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները։Տոների և ծեսերի նպատակն է երեխաներին փոխանցնել մշակութային ժառանգության յուրօրինակ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակության և ազգայի արժեքների ձևավորմանը։Պարզ և հասկանալի է, որ նախադպրոցական տարիքի երեխան ամբողջովին չի կարող պատկերացնել, հասկանալ,ընկալել տոների և ծեսերի իմաստը ու նշանակությունը, սակայն երեխային ճիշտ ուղղորդելով, օրինակ ծառայելով, միջամտելով, աջակցելով կարելի է հասնել հիանալի արդյունքների։
2. Հայկական տոները և ծեսերը դրանք այն միջավայրերն են, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները,գիտելիքները։ Երեխան աստիճանաբար անկեղծ միտջավայրում,ամենօրյա աշխատանքի շնորհիվ իր լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով սկսում է յուրացնել ծեսը։ Ազատ ու անկաշկանդ միջավայրում խաղարկում է ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, ազատ խոսքվ ներկայացնում են իրենց գործողությունները ու գիտելիքները։
3. Հետազոտական աշխատանքը ցույց տվեց,որ նախադպրոցական տարիքի երեխան ազգային, ծիսական միջավայրում կիրառում է իր գիտելիքները , ձեռք է բերում որոշակի տեղեկություններ հայկական տոների մասին, ազատ արտահայտում է իր մտքերը, կարողանում է կողմնորոշվել ու կատարել համապատասխան գործողություններ,զարգանում է երեխայի գեղարվեստական երևակայությունը և ներկայացնում իր ստացած երևակայական պատկերացումը ծեսի և տոնի մասին։

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր (4-5 տարեկանների)
2. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր (5-6 տարեկանների)
3. Հ.Միտոյան, Լ. Սմբատյան, Լ.Սարգսյան, Ուս. մեթոդական ձեռնարկ « Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում»
4. Ա.Հովհաննիսյան, Լ.Ղույումչյան «Բարև Փոքրիկ» 2007թվ.
5. Ռ.Հարոյան «Զառիկ» 1996թվ.
6. «Նախադպրոցական մանկավարժության ընդհանուր հիմունքներ»
7. 5-6 տարեկանների դաստիարակի ուղեցույց